

## ՀՀ բնապահպանության նախարարն աշխատանքային այցով եղավ Արագածոտնի մարզում

21.05.2015

ՀՀ բնապահպանության նախարար Արամայիս Գրիգորյանն աշխատանքային այցով կատարեց Արագածոտնի մարզ: Մարզպետ Սարգիս Սահակյանի, ՀՀ բնապահպանության նախարարության մարզային ստորաբաժանումների, մարզպետարանի Բնապահպանության և գյուղատնտեսության վարչության համապատասխան աշխատակիցների մասնակցությամբ անցկացվեց մարզային խորհրդակցություն: Խորհրդակցության ընթացքում քննարկվեցին մարզի մի շարք բնապահպանական խնդիրներ:

Մարզպետ Սարգիս Սահակյանն իր մտահոգությունն հայտնեց մարզում առկա քարհանքերի վերաբերյալ, որոնք շահագործումից հետո չեն ենթարկվել ռեկուլտիվացման և շարունակում են աղտոտել շրջակա միջավայրը:

Արամայիս Գրիգորյանը, կիսելով մարզպետի մտահոգությունը, նշեց. «Մեր մոտեցումներն այս ոլորտում հստակ են: Այն ընկերությունները, որոնք ավարտել են հանքի շահագործումը կամ մոտենում են գործունեության ավարտին, պետք է օրենքի պահանջներին համապատասխան կատարեն իրենց պարտավորությունները՝ ռեկուլտիվացման ենթարկելով սույն տարածքները: Իսկ ինչ վերաբերում է լքված հանքավայրերին, ապա պետք է ասեմ, որ մենք դիմել ենք ՀՀ կառավարությանը, և կառավարության աջակցությամբ առաջիկայում կիրականացվեն լքված հանքերի ռեկուլտիվացման պիլոտային ծրագրեր, այդ թվում նաև ձեր մարզում: Մինևույն ժամանակ պայմանավորվածություն ենք ձեռք բերել ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության հետ, որպեսզի վերջինս բնապահպանության նախարարությանը և համապատասխան մարզպետարանին տեղեկատվություն տրամադրի այս կամ այն հանքավայրի փակման ծրագրի վերաբերյալ՝ նախքան հանքավայրի հրաժարման/փակման/ հավաստագիր տրամադրելը»:

Մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յուրա Ազատյանը բարձրացրեց Զասախ գետի աղտոտվածության հարցը, որը պայմանավորված է մարզում կոյուղաջրերի մաքրման կայանների բացակայությամբ և այդ կոյուղաջրերի՝ Զասախ գետը լցվելով:

Արամայիս Գրիգորյանն իր հերթին նշեց, որ գետի աղտոտվածությունն առաջ է բերում ինչպես բնապահպանական, այնպես էլ գյուղատնտեսական և ամոռջապահական լուրջ խնդիրներ, ուստի հարցը գտնվում է համապատասխան գերատեսչությունների ուշադրության կենտրոնում: Բնապահպանության նախարարությունն իր լիազորությունների շրջանակներում տեսչական գործունեությամբ փորձում է նվազեցնել բնությանը հասցվող վնասները՝ ուժեղացնելով վերահսկողությունը:

Նախարարն անդրադարձավ նաև մարզում շինարարական աշխատանքների իրականացման գործընթացում թույլ տրվող խախտումներին՝ նշելով, որ բազմաթիվ են դեպքերը, երբ շինաշխատանքները սկսվում են առանց համապատասխան փորձաքննական եզրակացությունների, ինչը հակասում է օրենքին:

Այցի ավարտին Արամայիս Գրիգորյանը հանձնարարականներ տվեց համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին և ընդգծեց, որ վերը նշված խնդիրները շարունակելու են մնալ նախարարության մշտական ուշադրության կենտրոնում: